


ՊԱՅՄԱՆՔ

Յարեկան գին և Պայույ 4 մր. 8 ՄՅՃ.
Գաւառաց 10 ՄՅՃ.
Վեցամս. և Պայույ 4 ՄՅՃ.
Գաւառաց 5 ՄՅՃ.
Պատր երկիրներու 50 Ֆր.
Յանուարիան տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դրշ է. աւելի անգամներու
համար դատ տակարարութիւն կը-
լայ :
Իւրաքանչիւր թիւ 2 դրշոյ թուղթ.



ԼԵՐԱՔԻՐ

ՀԱՆՈՒՄԱԶՈՐԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՅՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 7 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Արեւելեան կաթոլիկ ազգայնոց նկատմամբ մեր դրած քանի մը դի-
տողութիւնները մեր պաշտօնակիցներ
բէն միոյն կողմէն անտեղի խժժա-
նաց ենթակայ եղած են : Բիւրեղեանի
առ Հռոմայ դահն յայտնած հնազան-
դութիւնը ձեռքով թուածն էր զա-
մարելը « ծաղրելի » է եղեր, քանզի
այդ վերադարձը պատրաստողը Գաղ-
ղիոյ դեսպանն է եղեր, և Արեւելեան
կաթոլիկներն Հայաստանեայց Եկե-
ղեցւոյ գերին հրաւիրելն ալ « անկը-
թութիւն » :

Գաղղիական կառավարութիւնը
թէպէտ հանրապետական և ազատա-
միտ իւր սահմանին մէջ, բայց թուր-
քիոյ մէջ կաթոլիկութեան ջերմ
պաշտպան է եղեր, և մեր ազգին
Գաղղիոյ դեսպանին հետ ունեցած
յարաբերութեանց փափկութեանը
պատճառաւ, անպատեհ կը լինի եղեր
Բիւրեղեանի դէպքը ձեռքով թուածն
էր զամբարիտ համարի :

Մեր դիտողութիւնն ոչ Գաղղիոյ
ոչ ալ Գաղղիական դեսպանին վերա-
բերութիւն ունի, քանզի մեք մեր
պաշտօնակիցին կարծեացը չենք կըր-
նար համամտիլ թէ Գաղղիոյ դեսպանն
այսպիսի դործերու կը մասնակցի :
Ստոյգ է որ լրագրէք ծանուցին թէ
Գաղղիոյ դեսպանատան թարգման-
ներէն ոմանք Գեր. Հասունի չնորհա-
ւորութեան դնայեր, և դեսպանն
իւր նաւակը Բիւրեղեանի տրամադ-
րութեան ներքեւ դրեր է շոգենաւ
երթալու համար, բայց ասոնք ար-
տաքին քաղաքավարութեան ցոյցեր
են : Ի՞նչ ապացոյց կայ թէ վսեմ Պ.
Յուրնիէ եղած է Բիւրեղեանի դա-
սալըութեան հեղինակը : Այսպիսի
կարծիք մը յառաջ բերելն ընդհա-
կառակն Նորին վսեմութեան այն-
պիսի դեր մ'ընծայել է զոր կարելի
է ինք ևս ընդունիլ չուզեր : Հակա-
հասունեանց շարժումը Գաղղիոյ կայս-
րութեան ժամանակէն սկսած էր, և
նոյն իսկ այն ատեն Գաղղիոյ կառա-
վարութիւնը կաթոլիկ Հայոց վէճե-
րուն միջամտութիւն չընելով՝ մինչև
ցարդ իւր անկողնակալ դերը չէ
թողուցած : Մեք այնպէս կը հաւա-
տամք թէ հանրապետական Գաղղիա
Արեւելից մէջ աւելի ազատական և
բարձր աշխարհավարութիւն մը բըռ-
նելով՝ առաւել համակրութիւն վաս-
տըկեցաւ : Մեր այս ըսածին վկայ են
Պ. Յուրնիէի մեն. Ներսէս Սրբազան
Պատրիարքին հետ ունեցած խօսակ-
ցութիւնները : Պ. Յուրնիէ անձամբ
աղատաւոր է, և Հայոց Պատրիար-
քին աղատականութենէն ալ խիստ դժ

եղած է : Ունեցւոյ խնդրոյն մէջ Պ.
Յուրնիէի և Գաղղիոյ առ Հայոց ազգն
ցոյց տուած համակրութիւնը կը հա-
տատէ թէ Գաղղիա արդարութեան
պաշտպան է և ոչ թէ լոկ կաթոլի-
կութեան :

Գաղղիա և բոլոր Եւրոպայ այս օր-
ւան օրս հանդիսաւոր դաշնագրով մը
Հայոց ազգը քրիստոնեայ հասարա-
կութեանց անդամ ճանչած են : Դա-
ւանութեան խնդիրները քաղաքագի-
տաց առջև կարեւորութենէ դուրս են,
և Գաղղիականութեան կը մնայ վիճել ա-
նոնց վրայ : Բարեբաղդաբար այսօր-
ւան օրս անոնք ալ սակաւաթիւ են :

Այս քաղաքական դիտմամբ էր որ
մեք ալ ոչ թէ արտօրացինք մեր կա-
թոլիկ ազգայիններն Հայաստանեայց
Եկեղեցւոյ գերիւր հրաւիրելու, և այլ
փափաք միայն յայտնեցինք, և կար-
ծեմք ամեն մարդ ազատ է իւր բաղ-
ձանքն անկեղծօրէն յայտնելու : Մեք
մեր իրաւն ազգութեան շահուց աւե-
րի նպատակաւ համարելով՝ առանց
քաջութեան երեւան հանեցինք, միան-
գամայն յարեցով թէ մեծ յոյս մը չենք
կրնար դնել անոր յաջողման վրայ, ի
նկատի առնելով այն ամեն դժուարու-
թիւններն որք այսպիսի քայլի մ'ար-
դեք են : Սակայն այսպիսի միութիւն
մ'իշուհ համար նաեւ հաւանական
չպիտի կրնայ լինի :

Մեք Հռոմէական հայերն իբրեւ
եղբայր և ազգակից կը նկատեմք,
դաւանութեան խնդիրը փաղկաթնե-
րու թողով և միթէ անկրթութիւն
է երբ բաժանեալ երկու եղբարց մին
ըսէ միւսին. « Եղբայր, դուք մեզնէ
բաժնուեցաք և ուրիշ տուն գնացիք,
եթէ դո՛ւ չէք ձեր վիճակէն, հըրա-
մայեցէք ձեր հայրենի և մայրենի
տունը, և միութեամբ աշխատեցէք մեր
բարօրութեան համար » : Այսպիսի
կոչ մը կատարեալապէս մարդավարա-
կան է, և եղբայրսիրութեան նշան :
Անկրթութիւնն անորն է, որ այսպիսի
կոչ մը սխալ մեկնելով ինք ևս բան
մ'ըսած լինելու համար Արեւելեան
կաթոլիկ Հայոց Ասորիներուն ու Նես-
տորականներուն հաւասար դիրք մը
տալ կ'երազէ Հայոց Պատրիարքին
իրաւասութեան ներքեւ, և զայս ա-
ղատամտութիւն կը համարի, առանց
մտածելու թէ այսպիսի առաջարկ մը
բաւական է անոնց զգացումը վերա-
ւորելու :

Վերջապէս այս խնդրոյն վրայ եր-
կար վիճաբանելու հարկ չենք տեսներ :
Մեք մեր իրաւն յայտնեցինք ապացու-
ցանելով թէ ոչ միութեանութիւն է
և ոչ անկրթութիւն, այլ ազգասիրա-
կան զգացման արդիւնք : Արեւելեան
կաթոլիկ Հայք հարկաւ իրենց շահուց
վրայ խորհրդածելով՝ ըստ այնմ պիտի
շարժին : մեք պարզ հանդիսատես
մ'ենք առանց կողմնակալութեան :

Միւս կողմէ, իբրեւ անկողնակալ

հանդիսատես չեմք կրնար հաստա-
տել մեր պաշտօնակիցներէն մէկ ու-
րիշին այն դիտողութիւնը թէ ըստ
որում Արեւելեան կաթոլիկները « կա-
թոլիկ » անուն կը կրեն, պէտք է ան-
պատճառ Հռոմի ամեն հրամանաց կու-
րօքն հնազանդին Հասունեանց ամե-
նէն մեծ վստահ այս է. և երբ մէկն
այսպիսի խորհուրդ մը կուտայ, ուրիշ
բան չընեն՝ բայց եթէ Հասունեանց
դատը պաշտպանելով՝ յայտնապէս
կուսակցութեան դործիք լինել :

ՍԱՀՄԱՆԱՐԻՈՒԹԻՒՆ ՊՈԼԻԴԱՐԻՈՅ

(Շաբաթական Թիւ Բէ 2269)

58.—Ոստիկանութեան կանոնադ-
րութիւններն հաւասարապէս պար-
տաւորիչ են իշխանութեան երկրին
մէջ բնակող ամեն մարդոց :

59.—Երկրին բոլոր անշարժ սե-
փականութիւնները տեղական օրինաց
ենթարկեալ են :

60.—Ուրիշ ամեն մասամբ իշխա-
նութեան երկրին մէջ բնակող օտա-
րազեաց գիրքն յատուկ օրինօք սահ-
մանեալ է :

61.—Պուլըարիոյ հպատակները մի-
այն կրնան քաղաքային կամ դինու-
րական պաշտօններ ստանալ :

62.—Օտար հպատակը Ազգային
ժողովոյ հաւանութեամբ կրնան դո-
ժածուիլ :

63.—Սեփականութեան իրաւուն-
քն անբռնաբարելի է :

64.—Ոչ մէկուն ձեռքէն իւր ըս-
տացածքը կրնայ բռնի առնուիլ՝
բայց միայն հասարակաց օգտի համար
և արդար փոխարինութիւն մը հա-
տուցանելով : Այս խնդրոյն վրայ հարկ
եղած դատաւարական կանոններն
յատուկ օրէնքով մը պիտի սահման-
ուին :

65.—Պուլըարիոյ ամեն հպատակ
պարտի օրինօք սահմանեալ տուրքե-
րն հատուցանել պետութեան : Օտա-
րազեաց համար բացառութիւններն
յատուկ օրինօք պիտի կարգադրեն :

66.—Իշխանն ու գահաժառանգը
տուրքէ ազատ են :

67.—Ամեն Պուլըար հպատակ պար-
տի բանակին մէջ ծառայել յատուկ
օրէնքի մը համեմատ :

68.—Չիրաւարական յանցանքնե-
րը՝ միայն դործօն ծառայութեան ժա-
մանակ պատերազմական ատենից առ-
ջեւ պիտի դատուին :

69.—Ոչ ոք կրնայ պատժուիլ և
թէ ձեռնհաս դատարաններէն դա-
տաւարտուած չլինի :

70.—Չերաւարակութիւնը և տանց
մէջ խուզարկութիւնը օրինաց համա-
ձայն կերպիւ միայն պիտի կրնան կա-
տարիլ :

71.—Հասարակային վտանգի ժա-
մանակ իշխանը կրնայ նախընթաց եր-

ՊԱՅՄԱՆՔ

Գրուած զնացած լրագրաց ծանու-
ածաքը խմբագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ օր և իցէ պրտութիւն խմբագրի
—Տնօրէնին պիտի ուղղուի : Վարա-
թիւս Սանարքըժար Հասունի թիւ
198, Նորո խան, Մասիսի գրասեն-
եակը :

Հանրու ծախքը չվարուած նա-
մակ չընդունուի :

Չապուած նամակ, յոգում, և
ետ չեն արուիլ :

կու յողուածները դադարեցնել բո-
լոր երկրին կամ մասնաւոր տեղերու
մէջ, բայց դործը պէտք է Ազգ. ժողու-
վոյ ներկայէ՝ յառաջիկայ նստին մէջ :

72.—Մասնաւորաց նամակներն ու
հեռագրերն անբռնաբարելի են : Այս
կանոնին հակառակ վարուող պաշտօ-
նատարք մասնաւոր օրէնքի մը համե-
մատ պիտի պատժուին :

73.—Նախնական դատարարակու-
թիւնը պարտաւորիչ է ամեն հպատա-
կաց համար :

74.—Մամուլն ազատ է, բայց ով
որ այս ազատութիւնը չտրաւար դո-
ժած է, պատառնանաւոր պիտի լինի
յատուկ կանոնադրութեամբ :

75.—(Փոխադրութեան մէջ մնա-
ցուած է) :

76.—Պուլըարը իրաւունք ունին
խաղաղապէս և առանց զինուոյ գու-
մարիլ՝ ամեն խնդրոց վրայ վիճելու
համար՝ առանց մէկէ մ'արտօնութիւն
խնդրելու : Բայց թէպէտ տեղ գումա-
րու մեքն ոստիկանութեան կանոնաց
ենթարկեալ են :

77.—Ամեն հպատակ կրնայ իւր
անուամբ աղերսագիր մատուցանել
ձեռնհաս իշխանութեանց : Նստուոյ-
եալ ընկերութիւնը և հաստատու-
թիւնը ալ կրնան աղերսագիր տալ
այնպիսի դործոց նկատմամբ, որք օ-
րինաւորապէս իրենց կը վերաբերին :

78.—Ազգ. ժողովը Պուլըարիոյ
երեսփոխան իշխանութիւնն է՝ թէ
սովորական ձեռքի և թէ օսհանա-
գիր ձեռն տակ :

79.—Սովորական Ազգային ժո-
ղովը հետեւեալ կերպիւ կը կազմուի .

1՝ Պուլըարաց Եկեղեցւոյ կամ ա-
նոր պատուիրակին, և եպիսկոպոսաց
կէսն երկրորդութեան կարգաւ : 2՝ բարձ-
րագոյն ատենին նախագահներուն և
անդամոց կէսն՝ աստիճանի կարգաւ
կամ վիճակաւ : 3՝ գաւառական և
առեւտրական դատարանաց նախա-
գահներուն և անդամոց կէսը վիճա-
կաւ : 4՝ Որոշուած ժամանակաց մէջ
ժողովրդեան ըուէնքն ընտրուած ե-
րեսփոխանք : 20000 բնակչաց համար
երեսփոխան մը պիտի ընտրուի, եր-
կու սեռերն ալ համեմատ : Ընտրա-
կան յատուկ օրէնքներ պիտի հըրա-
տարակին ըուէարկութիւնը կանոնա-
դրելու համար : 5՝ Իշխանն իրա-
ւունք ունի՝ ժողովրդային ըուէնքով
ընտրեալ երեսփոխանաց հաւասար
թիւով երեսփոխաններ ընտրել :

80.—Երեսփոխանք ոչ միայն ի-
րենց ընտրական շրջանակին համար
կը գործեն, այլ բոլորական ազգին
համար, և հետեւապէս չեն կրնայ
հրամայական պաշտօն ընդունիլ ի-
րենց ընտրողներէն : Երեսփոխանք
կատարեալ աղատութիւն ունին Ազգ.
շահուց վերաբերեալ ամեն խնդրոց
վրայ վիճարանելու :

81.—Ազգ. ժողովը իւր նիստե-

բու չըջանին բայցման ժամանակ վեց ընտրելիաց ցուցակ մը կը ներկայէ իշխանին, որ անոր մէջէն նախագահ մը և վարչ-նախագահ մը պիտի ընտրէ:

Եկողարքը պատուական նախագահ է:

82.—Աղգային ժողովը կընտրէ իւր ատենադպրները:

83.—Նախարարը կընտն մասնակցել Աղգ. ժողովը դործողութեանց:

84.—Իշխանը կընայ յատուկ պատուիրակներ կարգել և ներկայացնել օրինաց ծրագրերուն նպատակն Աղգա. յին ժողովին բացատրելու համար: Այս պատուիրակները նոյն իրաւունքները պիտի ունենան Աղգային ժողովը մէջ ինչ որ ունին նախարարը:

85.—Աղգային ժողովը կընայ նախարարներն անձամբ կանչել երբ բացատրութեան պէտք ունենայ: Բայց նախարարը կընան բացատրութիւն չտալ այնպիսի նիւթոյ վրայ՝ զորս հրապարակեն անպատեհ է պետական պատճառներով:

86.—Իւրաքանչիւր անգամ կըրնայ խօսիլ և քուէարկել իւր համոզմանց համեմատ:

87.—Աղգային ժողովը մէջ բարեկարգութիւնը պահպանելու համար նախագահին և անդամոց ունեցած իրաւունքներն Աղգային ժողովին քուէարկեալ յատուկ կանոնադրութեամբ մը կ'որոշուին:

88.—Աղգային ժողովը անգամը հաստատարային իրաւանց վերաբերեալ յանցանոց համար չեն կրնար դատարանաց անջն. դատուել առանց Աղգային ժողովը հաւանութեան:

89.—Ներախօսանք չեն կրնար Աղգ. ժողովը նիստերու շրջաններէն օր առաջ կամ շրջանաց միջոցին ձերբակալել: Բայց միայն ծանր ոճիրներու համար, և այս պարագային մէջ խօս չեն կրնար դատաւորանք քաշուիլ առանց Աղգային ժողովը հաւանութեան:

90.—Երեւոյթանք չեն կրնար պարտուց համար ձերբակալել: Աղգ. ժողովը նիստերու շրջաններէն օր առաջ, և շրջանին ժամանակ:

91.—Աղգ. ժողովը մէջ թախուր մնացած տիպուց համար նոր ընտրութիւնը պիտի լինի՝ ընտրական օրէնքի մը համեմատ, որ յետոյ պիտի ըլնուի:

92.—Աղգ. ժողովը նիստերն հրապարակային են:

93.—Նախագահը, նախարարը կամ երեք անգամը միշտ կընան գըռնիակ նիստ առաջարկել: Այսպիսի առաջարկութեանց վրայ վիճաբանութիւններն ալ գնական պիտի լինին, և որչաւ մը քուէարկութեամբ պիտի տրուի:

94.—Նախնիքաց յօդուածին դօրութեամբ տրուած որոշումները նախագահին կողմէն հրապարակու պիտի ծանուցուին:

95.—Աղգ. ժողովը նիստ բրած միջոցին ներքի չէ զէնք կընէ այն զէնքերուն մէջ ուր Աղգ. ժողովը կը գումարի: Զինուորական պահապաններն ալ առանց Աղգ. ժողովը յատուկ կամոց չեն կրնար այն զէնքերուն մէջ մտնել:

96.—Աղգային ժողովը իրեն յատուկ ոստիկանութեան մարմին մ'առնի, որ նախագահին հրամանաց ներքե դրուած է:

97.—Աղգային ժողովը ինք կ'որոշէ իւր օրակարգը:

98.—Աղգային ժողովը պարտի օրինաց ծրագրերը ընելը պետութեան փոխառութեանց՝ արդոյ և անոնց հաւաքման միջոցներուն վերաբերեալ առաջարկութեանց վրայ վիճաբանել, պիտեմէն ներքե որոշել և հաւանութիւնները մարքել՝ նախարարներն հա-

չիւ տալու հրաւերելով՝ երբ հարկ լինի:

99.—Աղգային ժողովը կընայ առան տեսակ աղերսագրեր ընդունիլ և զանոնք նախարարաց դրկել:

100.—Աղգային ժողովը անգամը իրաւունք ունին հարցում ուղղել նախարարաց, անոնք ալ պարտական են իրենց եղած հարցմանց պատասխանելու:

ՅՈՒՆԻՍԿՈՒՆ

ՀՆՈՒՍԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կալիպթա 17 մարտ.

Հնդկաստանի փոխարքայ Լորտ Լեթթըն հաւանութեան վերջնական պայմաններ դրկել Ա. Ֆրանստանայ Էմիր Եագուզ խանին որ տակաւին չէ պատասխանած:

Մեծ թուով Անգլիական զօրք համախորհուած է 'ի ձեւապատ' 'ի հարկին Բապուլի վրայ քարկու համար:

Այս ատենու համաձ հետաքէրք

Փիլիպէ 18 մարտ.

Արմիայէն առնուած լրաց նայելով, այն տունն ուր Պ. Պ. աշ Գուլուի և Շմիտ գիշերն անցուցած էին, երէկ առաւ աղաւթներ է խոթանէն: Պուլաբաց ազգային զօրքը նորէն իւր պարտը կատարել է և հրոցանի բունի հարուածներով խոթարարները յետոյ մղել է: Յիշեալ աղգային զօրքն երկու հոգի երեսնուն վերաւորուել են խոթարարաց արձակած քարերով: Այս եղելութեանց վրայ Պ. աշ Գուլուի տունէն դուրս ելած լինելով, Գաղղիացի լինելուն պատճառաւ կեցցէներով ողնուներ է ամբուլէն:

Պ. Շմիտ երեսնական վարչութեան անտուկները աչքէ պիտի լանցեն այսօր: Աթօլիին զօրավարը միջոցներ ձեռք առաւ զայն պաշտպանելու: Ամբուլը խիստ էգրգուեալ է, բայց Պուլաբաց աղգային զօրաց ընթացքը շատ լաւ է:

Վիէննա 18 մարտ.

Կառավարութիւնը ծրագիր մը ներկայց երեսփոխանական ժողովոյն, յորում արտօնութիւն կը խնդրէ մինչև ապրիլ վերջը տուրքեր հաւաքելու և անուանական 100 միլիոն ոտկոյ արծեթ թուղթ հանելու՝ 1879 տարւոյն բացը գոցելու համար:

Պէլրատ 18 մարտ

Սերպիա ամեն տէրութեանց առաջարկեց առեւտրական առժամանակեալ գաշնագրութիւններ կնքել ամենէն աւելի նպատաւորեալ աղաղը հիման վրայ: Այսպիսի գաշնագրութիւն մ'երէկ ստորագրեցաւ Սերպիոյ և Անգլիոյ միջև:

Սանտա Վերըն Պէլրատի մէջ մեծ յանձնադրով մը պիտի դուրսի երկաթ թուղթը գործոց համար:

Փարիզ 18 մարտ.

Օսմանեան Գոնաթիա 11.95

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Ասորեաց Տրիպոլիոյ նախարը կառավարել Աղղի վաշան Գարապի կառավարիչ անուանեցաւ:

Թօքվիլի գործին վրայ առնուած լուրերն հակասական են: Երէկուան և առջի օրուան զոհացուցիչ լրաց հակառակ վաշքով իւր պրաւաւորեան թուով կրժանուցանէ թէ Թօքվիլի ծրագիրը բոլորովին մէկ կողմ դրուել է: Բ. Գուլեն տրուած երրորդ պայմանաժամն, որ կը կարծուէր թէ ուրաթ իրիկուն պիտի լըրանար, երէկ գիշեր լրացել է, և պայմանաժամը նորոգելու հարկ չէ մնացել: Բ. Գուլու տէրութեան ելմնական վիճակին բարւոյն համար այժմ ուրիշ միջոցներու պիտի դիմէ, և ուրիշ առաջարկութիւններ պիտի ընդունի եղբը:

Հալապի հեռագիր մը, որուն իմաստն հակասական է երկու հարցը դաւած էր, կը ծանուցանէր երէկ

թէ Պ. վաշանի մը Օսմանեան արժեթիթատեարց ժողովոյն գիւտանք ընդունելով՝ սա պատասխանը տուել է. — «Յունիար 30 Օսմանեան պայմանագրին մէջ պայմանագրեալ գումարներուն գոյութիւնն առաջին կարգի Պանքայի մը կողմէնէ կրաշխառոււածին պէս, Գաղղիացի պատուիրակները պիտի անուանեմ և Անգլիական կառավարութեան պիտի խնդրեմ որ իւր պատուիրակներն անուանէ: »

Վաղըթ կըսէ թէ Հալապի այս հեռագրին իմաստը պարունակող ս' և է հեռագիր մը չէ եկած Բ. Գուլու մինչև երէկ իրիկուն, և կարծիք ընողներ ալ կան եղբր թէ այս հեռագիրը Թօքվիլի կողմէնէ կ'ընկեր չլինի:

Աւերդը է ըսել թէ Վաղըթի այս տեղեկութիւններուն մինչև ս' աստիճան ստույգ լինելը չկրնար գիտցուիլ:

Սըր Հօրնսլի ծովագետն և իւր հրամանաց ներքե գտնուող բարձրաստիճան սպայք երէկ միջնեցան մայրաքաղաքէս:

Բ. Դրան կողմէնէ Գաղի Մուխթար փաշային նոր հրահանգներ տաւ նոյ շողենաւը ճանքան քանի մը տեղեր պիտի հանդիպի, որով յիշեալ հրահանգներն յառաջիկայ կիրակի օրէն առաջ չեն կրնար հասնիլ Մուխթար փաշային:

Գնդապետի տեղակալ Ահմէտ Ֆուլիդ պէյ Նըք շրջանակի թաղապետութեան առաջին հարտարապետներ կրաշափ անուանեցաւ՝ Նիքօլարի Ֆուսթա Էֆէնտի տեղ, որ պաշտօնանկ եղած էր:

Կ. Պոլսոյ քաղաքագետութեան հաղագործաց վրայ հսկողութիւնը դիւրացնելու համար՝ որոշեց որ այսուհետեւ ամեն փուռ քաղաքագետութեան որոշուած թուով մը հաց հանէ ամեն օր:

Ալպանիացոց Սերպիոյ հոյն արշաւներն նկատմամբ Եւրոպական լրագրաց տուած տեղեկութիւններն երէկ հրատարակեցին քաղաք իւր այս առաւօտեան թուով կը ծանուցանէ թէ մայրաքաղաքի Սերպիական դեսպան Պ. Քրիսթիլ Բ. Գուլու դիմելով աղաղային համար ինչ ինչ նախադաշնական միջոցներ առաջարկել է, խնդրելով միանգամայն որ թուրքոս—Սերպիական սահմանագրելին վրայ Օսմ. զօրք դրկուի: Բ. Դրան պատասխանը տակաւին յայտնի չէ:

Կրսուի թէ մաքրատան մէջ ճէմիլէթի բուսումնային անուամբ կեցող մաքրական ժողովը ջնջուելով, նոր ժողով մը կ'ազմուէր է ընդ նախագահութեամբ Բօրթու քաղաքի Միքայէլ Էֆէնտիի:

Կ. Պոլսոյ շրջակայ չորս գաւառներէն (Գաղայի Երպատ), այն է Բուսմէլի կողմը Զօրլույէն ու Չաթալճաւ յէն և Ասիոյ կողմէն ալ Խուկուտարէն ու Նիկոմիդիայէն դուրս դուրս տան ներքե արդիւնեցաւ, մի միայն Կ. Պոլիս բերուելու աղաւթութեամբ:

Անգլիական լրագիր մը սուտ կը հանէ այն լուրը թէ Ռուսը Սիլիսիթի մօտ Արապ—Թապիսի ամրոցը քանդել սկսած են: Ընդհակառակն Ռուսը այն ամրոցը Ռուսներէն ետ առնելու է 'ի վեր փութով կամօնը նեն:

Պուլաբոյ թրնոյ քաղաքին մէջ Աղգային պանքա մը հաստատեցաւ երեք միլիոն բուպի գուման գլխով:

Փարիսէն Նայէ Ֆրայէ Բրէսէ լրագրէն քաղաք ձեռագիր մը սուտ կը հանէ այն լուրը թէ Գաղղիական կառավարութիւնն Հոդոս կղզին գրաւելու միտք ունի:

Հոլանդաւոր Պարիսիսիս Բուսիլիսն որ իւր ձեռութեան օրերը ձենէ վաւանցունէր, մարտ 9ին վախճանեցաւ: Պարիսիսիս երկար ժամանակ Կոկիսիոյ մէջ Ռուսիոյ կայսեր տեղակալութիւն ըրած է: Ասոր օրովն էր որ Կոկիսիոյ ապրատակութիւնը զսպուեցաւ և Շէյխ Շամիլ անձնատուր եղաւ: Ռուսական բանակին մէջ Մարէշալի աստիճան ունեցող 3-4 զօրավարներէն մին էր:

Վիէննայի Տայէ Տայթուի լրագիրն հետեւեալ հեռագիրը կը հրատարակէ.

«Չէթինէ 1 մարտ.
«Կուսնէ քաղաքն երեք օր առաջ Գարատացի զօրքերէն գրաւուեցաւ առանց գիւմարութեան. բայց Բլաւա քաղաքին մէջ տակաւին Օսմանեան պահապան զօրքը կը մնայ: Բլաւայի Ալպանիացի գիւտարները կը յայտարարեն թէ պատրաստ են Գարատացի իշխանին հնազանդիլ, բայց այն ժամանակ միայն երբ Ալպանիական միութիւնն, որուն հաւատարմութեան երգում տուած են, զիրենք այս երդումի կապէն աղատէ: Ասոր համար Բլաւայէն պատգամաւորութիւն մը գնաց 'ի Բօլիս, որ Ալպանիական միութեան արդի կեդրոնն է: »

Հայ մ'անցեալ շաբաթ Պէտէս թէնի մէջ Թուրք կալաւածատէրէ մը խանութ մը կը վաճէ, և մէջն ապրանք կը լցնէ: Արդ, յայտնի է թէ Թուրքերը վաղուց 'ի վեր այդ շուկան իրենց յատկացուցած են, թէ պէտ խանութներուն տէրերը միշտ կուզեն աւելի վաճքով քրիստոնէից տալ իրենց խանութները: Թուրքերը կը բարկանան քրիստոնէին դէմ, և խօսք մէկ ընելով երկուշաբթի օրը խանութներն կը գոցեն, Քրիստոնէին խանութներն վրայ կը յարձակին և «Այս շուկային մէջ Կաւալ չկրնար նստիլ» պուալով շատ մը նախատինքներ կընեն Քրիստոնէին և սաստկապէս կը ծեծեն: Հայը կառավարի խանութը գոցել, և լրամնուս նայելով՝ գտաւ բացելու է նոյն շուկայի Թուրքաց դէմ:

Շատ ցատարի է որ նոյն խօս մայրաքաղաքիս մէջ և կեդրոնական իշխանութեան աչքին առջև այսպիսի բռնութիւն մ'իդործ կը դրուի Քրիստոնէի մը վրայ, հակառակ ամեն օր յեղեղուած «Հաւատարմութիւն» բառին, որ իրականութիւն ստանալէ տակաւին հեռի է:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼՍ			
ԵՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ			
Երէկ իրիկուն գոցուեցաւ	13,	8	
Այս առաւօտ բացուեցաւ	13,	6	
Կէս օրին	43,	42	
Բուսմէլի երկաթուղի	Փր.	46	25
Թղթաղրամ	Լր.	50	1
ԸՆԹԱՅՐ ԱՐԺԵԹՂՈՅ			
Կ. Պոլս 6 Մարտ			
Ստիլթէ Զէնկուլի բաժ.	Անգլ.	Լր.	4,22
Փոխառականութեան	.	.	3,22
Կ. Պոլսոյ Պանքային	.	.	6,40
Քրիսթի Զէնկուլի	.	.	5,5
Փոխ.	4863	Ֆր.	72
.	4865	.	73
.	4869	.	72
.	1872	.	22
.	1873	.	68
Թրամուայ	Օսմ. Լր.	.	4 75

